Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
մարտի 10-ի N 239 - Ն որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ԱՊՀ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱԿԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով կարգավորվում են ԱՊՀ մասնակից պետությունների հակահաբեկչական կենտրոնում (այսուհետ՝ հակահաբեկչական կենտրոն) Հայաստանի Հանրապետության ներկայացուցչի (այսուհետ՝ ներկայացուցիչ) խնդիրների ու գործառույթների, իրավունքների և պարտականությունների հետ կապված հարաբերությունները:

2. Ներկայացուցիչը նշանակվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրենի ներկայացմամբ: Ներկայացուցիչը նշանակվում է երեք տարի ժամկետով: Նշված ժամկետը կարող է երկարաձգվել մինչև երեք տարով:

3. Ներկայացուցիչ կարող է նշանակվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության այն ծառայողը, ով մինչև նշանակումը վերջին մեկ տարին զբաղեցրել է ազգային անվտանգության մարմինների ծառայողների գլխավոր խմբի այլ պաշտոն կամ մինչև նշանակումը վերջին երեք տարին զբաղեցրել է ազգային անվտանգության մարմինների ծառայողների ավագ խմբի որևէ պաշտոն:

4. Ներկայացուցչի գործունեության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրենը, իսկ ուղղակի ղեկավարումը՝ Հայաստանի Հանրապետության

կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրենի համապատասխան տեղակալը։

II. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Հակաահաբեկչական կենտրոնում ներկայացուցչի հիմնական խնդիրներն ու գործառույթներն են՝

1) հակաահաբեկչական կենտրոնի և Հայաստանի Հանրապետության միջև միջազգային ահաբեկչության և ծայրահեղականության այլ դրսևորումների դեմ պայքարի ոլորտում խնդիրների գործնական լուծման հարցերում համագործակցության ապահովումը.

2) աջակցությունը համատեղ հակաահաբեկչական միջոցառումների կազմակերպմանը և անցկացմանը.

3) աջակցությունը հակաահաբեկչական կենտրոնի և Հայաստանի Հանրապետության միջև տեղեկատվության փոխանակմանը.

4) մասնակցությունը միջազգային ահաբեկչության և ծայրահեղականության այլ դրսևորումների դեմ պայքարի միջպետական ծրագրերի մշակմանը և իրականացմանը.

5) մասնակցությունը միջազգային ահաբեկչության ոլորտում հակաահաբեկչական կենտրոնի կողմից առաջարկությունների մշակմանը և դրանց ներկայացմանն ԱՊՀ մասնակից պետությունների ղեկավարների խորհրդին, ԱՊՀ մասնակից պետությունների անվտանգության մարմինների և հատուկ ծառայությունների ղեկավարների խորհրդին և Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների այլ մարմիններին.

6) աջակցությունն ահաբեկչական բնույթի հանցագործություն կատարած և քրեական հետապնդումից խուսափող անձանց միջպետական հետախուզման կազմակերպմանը.

7) ահաբեկչության դեմ պայքարի ոլորտում Հայաստանի Հանրապետության կողմից վերապահված այլ գործառույթների իրականացումը:

III. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6. Հակաահաբեկչական կենտրոնի գտնվելու պետությունում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչությունները և հիմնարկները ներկայացուցչին ահաբեկչության դեմ պայքարի ոլորտում ցուցաբերում են անհրաժեշտ օգնություն:

7. Ներկայացուցիչն օգտվում է հատուկ կապի միջոցներից, իսկ դրանց բացակայության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության դիվանագիտական փոստից և գաղտնի կապից:

8. Ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունից ուղղակիորեն ստանում է հրահանգներ, ինչպես նաև կատարում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրենի առանձին հանձնարարականները: Ներկայացուցչի գործառնական պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, սույն կանոնակարգով և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրենի հրամաններով:

9. Ներկայացուցիչն իր գործունեության մասին յուրաքանչյուր կիսամյակ հաշվետվություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԻ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ